



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԶՄԻՌՆԻԱ ԸԱԲԱԹ 30 ՅՈՒՆԻՍ 1862

ԹԻՒ 678

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԶՄԻՌՆԻԱ 30 ՅՈՒՆԻՍ

Քաղաքականության վերաբերեալ գլխաւոր գործքերը հանգարտ երեւոյթ մը ստացած են առայժմ՝ Լաւրայի մէջ, և հասարակութեան ուշադրութիւնը գէտ ի Մէքսիքո գարձած է. ուր Քաղաքացի դուքս փոքրիկ ձախորդութիւն մի ունեցան Կատալուքի ամբողջութեանց դէմ յարձակելով:

Քաղաքացի լրագրութիւնները կրնան թէ իրենց զօրաբանակը, որ 4-5000 հոգիէ բաղկացաւ, միայն 150ի չափ զինուոր կորուստեր է, իսկ Մէքսիքացի զօրապետին հրատարակած տեղեկագրութեանը նայելով՝ հազար հոգիի չափ վիրաւոր և մեռեալ ունեցեր են Քաղաքացիք: Օրադ և իցէ, այս ձախորդութիւնը վշտալի տալաւորութիւն մի բրաւ փարիզի մէջ և կառավարութիւնը իսկոյն որոշեց 15000 օգնական զօրք յաւաքելու ի Մէքսիքո: որոնք հետզհետէ ձամբայ պիտի ելլեն շուտով:

Կրտսի թէ Իտալիոյ տէրութիւնը՝ ըստ իրենդոյ Կաթոլիկ կայսեր, գործակից պիտի ըլլայ Քաղաքացի դուքս Մէքսիքայի մէջ:

Հաստատուն կերպիւ կը ծանուցանեն թէ Քաղաքացի ազգային երեսփոխանաց խորհրդանուցը պիտի չուսնուի, թէպէտև զուգուցեալ թէ կառավարութիւնը միտք ունի լուծելու գայն:

Ընդհանր բարձրագոյն մէջ գարձեալ վիճաբանութիւններ եղան Մեծին Բրիտանիոյ ամբողջութիւնները աւելցնելու վրայօք և որոշուեցաւ մեծագոյն մասին հաճութեամբ, որ 1 միլիոն 200,000 լիւրա ծախք ըլլան ազգային պաշտպանութեան վերաբերեալ յիշեալ շինութեանց համար: Այս առթիւ, ըստ Բէլքոմբըն հրապարակաւ զուցեց թէ Քաղաքացի կառավարութիւնը ամենին կասկածանաց կամ երկիւղի մը պատճառաւ չէ որ կուզէ երկիրը ամբողջութեամբ և մանաւանդ Քաղաքացի կողմանէ մեծագոյն վստահ

է. փասն զի անկարելի է, ըսաւ, որ երկու տէրութիւնք աւելին անկեղծ սիրով և մոտեմուլութեամբ կապուած ըլլան: որպիսի են այժմ Քաղաքացի և Բէլքոմբըն:

Այսու ամենայնիւ այս կապութիւնը իրաւունք մը չտար մեզ, յաւելցուց յիշեալ ազնուական Լորտը, որ զանց ընեմք հարկաւոր դրուշուութեանց վրայօք: փասն զի դժբաղդութեամբ մեծ փոճառութիւն ունիմք ի վերայ արագ փոփոխութեանց, որ կը պատահին ազգային ըզգացմանց մէջ: Զանկարծ ծանր խնդիրներ կըրնան ծագիլ և այժմեան բարեկամական յարաբերութիւնները աւելի:

Լորտ Բէլքոմբընին այս խոհական խօսքերը, որոնք ուշադրութեան արժանի են, սիրով և հաճութեամբ ընդունուեցան ազգային երեսփոխանաց խորհրդանուցէն:

Յայտնի է որ Հռոմ ժողովածու եպիսկոպոսները ուզերն մի մատուցին սրբազան Պապին, որուն մէջ անարդանօք իստեւով Իտալիոյ տէրութեանը վրայօք և Իտալացի ազգին Հռոմի վերայ ունեցած իրաւունքը ուրանալով, կը յայտենան թէ աշխարհական իշխանութիւնը հարկաւոր է Հռոմէական եկեղեցւոյն անկախութեանը համար: Իտալիոյ բարձրագոյնը, իւր բոլոր անդամաց հաւանութեամբ, աղբսագիր մի մատուց Վիքթոր-Լամանուէլ թագաւորին, բողոքելով ընդդէմ յիշեալ ուղերձին խօսքերուն, որոնք ապօրինաւոր և միանգամայն նախատական են, կըսէ, Իտալացի ազատասէր և քաջասիրտ ազգին:

Կը հաստատեն թէ Ռուսիան ճանաչեր և ընդուներ է Իտալիոյ թագաւորութիւնը և թէ Տուրանտո զօրապետը Բեդեստուրի պիտի յուղարկուի իբրեւ դեսպան Վիքթոր-Լամանուէլ թագաւորին:

Կը յաւելուն նաև, թէ Բրուսիոյ կառավարութիւնն ևս, Ռուսիոյ օրինակին հետեւելով շատ փամանակ չանցած պիտի ընդունի Իտալիոյ

միացեալ թագաւորութիւնը:

Քաղաքացի զինուորագրութիւններ կըլլան Իտալիոյ մէջ, առանց յայտնի ըլլալու թէ ինչ նպատակաւ է: Այսու ամենայնիւ այս բանին վրայօք հարցումներ ըլլալով ազգային խորհրդանուցին մէջ, մօտիւ Ռաթացցին պատասխանեց թէ կառավարութիւնը ամենին հաճութիւն չունի այս զինուորագրութեանը: սակայն այն պիտի գաղտուկ կերպիւ մը կըլլայ, որ խիստ դժուար է ձեռք ձգել այս յանցաւորները:

Կը հաստատեն թէ Իտալիոյ թագաւորութիւնը առայժմ 300 հազարէն աւելի պատրաստ զինուոր ունի: հետեւեալ մասնաւորաց զինուորագրութեանը կարօտ չէ:

Հռոմի ինդլոր տակաւին մի և նոյն կապութեան մէջ կը գտնուի: Կըսուի թէ Քաղաքացի կառավարութիւնը իմացուցած է սրբազան Պապին թէ յետ այսօրիկ գաղղիացի դուքս միայն Հռոմի նահանգին պահպանութիւնը պիտի ընեն: Բայց յայտնան կը զրուցուի թէ Հռոմի Քաղաքացի դեսպան մօտիւ տը Լալալէթ մարքէզ տարեկան երեք միլիոն ֆրանքի հատուցում մի առաջարկէ քահանայապետական քահին ի փոխարէն վիստուց կորստեան իւր աշխարհական իշխանութեանը: Այս հատուցումը ամեն տարի պիտի տրուի Իտալիոյ թագաւորութեանը, եւ ընդհանրութեամբ Քաղաքացի տէրութեան: Ինչպէս կը տեսնուի, այս առաջարկութիւնը շատ օրինաւոր է: սակայն Բէլքոմբըն կարգի աւել մերժեր է գայն:

Յաւալի է ապսքէն տեսնել, որ Հռոմի քահն՝ Կաթոլիկ նախորդ թագաւոր Ֆրանչիսկոս Կրկրորդին պէս յամառութեամբ կը վարուի: ուստի անոր գլուխը եկածը հաւանականաբար քահանայապետական կառավարութեան գլուխն ալ պիտի հասնի: այսինքն իւր աշխարհական իշխանութիւնը վերջապէս քանուլութեամբ ձեռքէն ելլի ետև Կաթոլիկ այժմեան եղած օգտակար առաջարկութիւնները պիտի չլրնայ գտնել:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԵՆՈՒՄ

Լորդոյ Խմբագիր Լորալոյս պատուական լրագրոյ: (1)

Ի Թէոդոսիա, 30 Մայիս 1862—Ռ.Յ.Մ.

Թէև պատիւ չունիմք Զերյադութեան ծանօթ լինել, սակայն վստահանալով ազգասիրութեանը վերայ՝ ներկայ դրութիւնս Զեղհադորդեմ, իբրեւ ազգային ամենակարևոր խնդիր, և յուսամոր Զերյադութիւնն տեղի չնորհէ իւր պատուական ազգային լրագրին մէջ:

Տկարութեան պատճառաւ՝ ըստ խորհրդոյ բժշկաց հարկ լինելով Սև ծովի ջուրերն մտանել, առժամանակեայ արձակուրդ ստացայ յիշխանութեանէս, և թողեալ զսուրբ Լ. շմաճին՝ անցայ ի Թիֆլիզ և անտի փութացայ ի փոթի, ուր իջեան առի իմ պատուական և ազգասէր բարեկամի աղա Տէր Ըմանոնեանցի մօտ, և պարապով խնդրեցի տեղւոյդ ազգային նոր լրագիրներն: որոց մէջ չստիպաւ հետաքրքրական էր ինձ Մէլ-ն, որովհետև մեր կողմին այդ հանգէնս սակաւ երբեք տեսնի: Սորա 149 թուոյն մէջ մի հատուած աւելի ուշ գրաւեց իւր Տէր Պալ- Գահանայ ի Լոր Կաթոլիկ վերնադրոյն:

(1) Այս նամակը ընկալար ի հայկազուն մեծարգոյ պարոն Յովհաննէս Ե. Միրաքեանց. որ Ռուսիոյ կայսերական գործակալ (փրօկուոր) է ի սիմօղի սրբոյ Էջմիածնի եւ խորհրդական պետութեան:

Կարգալով այս յօդուածն զամբողջով թէ ինչպէս գրողն վստահացեալ է մեղադրել զգերապատիւ Քաթոլիկ վարդապետն, իբրեւ թէ նա յանցաւոր քահանային բաւական պատիժ չէ տուեալ: Բայց առաւել զարմանամ այդ գիրն տպագրութեամբ հրատարակող Մէլ-ն վերայ թէ ինչպէս հաւատք է ընծայեալ այդպիսի թեթև գրութեան, որոյ չափազանց դարձածքն ինքնին ցուցանեն զստութիւնն: Մէլ-ն պէտք էր նախ այդ առաջարկին վերաբերեալ ստոյգ տեղեկութիւններ ժողովել, (եթէ ենթադրեմք թէ այդ խնդիրն հետաքրքրական և հարկաւոր էր ազգին համար), և ըստ այնմ ամենայն հանգամանաց հասու լինելով՝ ապա թէ քահանային ուսման և Գաբրիէլ վարդապետի պէս առաջնորդի վերայ ամբաստանական զրուցիւն հրատարակել, եթէ արդարեւ Մէլ-ն իւրեան մի զարմանալի պարտք համարել է եկեղեցականաց պախաւութիւններն յերեւան հանել: Այս ու սորա նման խորհրդածութիւններով՝ հարկաւոր համարեցայ, որ ի Թէոդոսիա հաւանելուս անպատճառ վերահասու լինիմ այս նիւթի վերայ, ուրովհետև այսպիսի մի խնդիր՝ օրէնքով իմ իշխանական շրջանիս պատկանի: Ուստի Թէոդոսիա գալով խնդրեցի վիճակային Կոնստանտինոպոլիս հաղորդել ինձ այս նիւթին վերաբերեալ տեղեկութիւններ, զորս մանր բնութիւն տեղեկացայ առաջնորդին խոհական կառավարութեան նաև այս գործի մէջ, որով Մէլ-ն պիտի Կաթոլիկ-ն զիս շատ դայթալիկեցայ: Լոր

այս բանին վերայ առաջնորդին հետ խօսակցութիւն անելով և զարմանք ցուցի Մէլ-ն անգղայն հրատարակութեանը, նա փոխանակ պատասխանեց ինձ ցոյց ետ դարձեալ Մէլ-ն մի, թիւ 159, որոյ մէջ կարգացի զարմացմամբ մի այսպիսի վերնադիր. «Կաթոլիկ-ն Կեր Պալ-ն վրայօք Կաթոլիկ-ն Կեր Պալ-ն: Կարգացի աւելի մեծ հետաքրքրութեամբ, և տեսի որ Մէլ-ն այն թուով զիւր առաջի վերոյ յիշեալ թիւն հերքէ. արդ զտէր Պողոս քահանայն արդարացուցանէ, բայց և այնպէս զառաջնորդը դարձեալ յանցաւոր կացուցանէ. այսու աւելի ևս հաստատուեցայ իմ մտածութեանս, թէ մեծ անխոհ հեմութիւն էր Մէլ-ն առանց ստոյգ տեղեկութեան հրատարակել այսպիսի համբաւներ, զորս առաջին անգամ ընդունի իբրեւ ճշմարտութիւն: Ի հարկէ ուշիմ կարգացողը իրաւունք ունի մտածելու, թէ այն 159 թուին միջի հատուածովն թէև այնպէս ծանր ծանր նախատէ զառաջնորդն և դժուար դը ժողովը զնա ուղարկէ (երես 92), անշուշտ իւր օրագրոյն մի ուրիշ թիւով հանելու է զառաջնորդն յերկինս երկնից: Բայց եթէ կարողացայք քաջութեամբ հասու լինել Մէլ-ի սղոյն՝ ինձ այնպէս կերել թէ Մէլ-ն խմբագիր անօրինին աւելի սիրելի է դժուար ուղարկել քան թէ յերկինս, աւելի նախատել, հայհայել, քան թէ դովել, փառաւորել զեկեղեցականն արժանաւորս ամենայն պատուոյ:

Հաղթան, ուրեմն ձեր մատաղատունի զաւակաց չորհրդէն ցէ՛ք ժամանակ, որ անոր մէջ անին ու դարգանան, և իւրենց սորվածը բեղմնաւոր և արդիւնաւոր ըլլայ, յօգուտ իրենց ապագայ կենաց և երջանկութեան, և յօգուտ ազգային յառաջադիմութեան: Քանզի հիմա միայն կրնամք այս արտուսական և կարեւոր ուսումները և դիտութիւնները ձեռք բերել, հիմա է միայն յորմար և երջանիկ ժամանակ, յորում մեր միտքերը կրնալուին, և հիմա կը սեմ, երբ մանկութիւնը ազատ աշխարհային հոգերէ և գրադմուշներէ՝ հանգիստ ուսման կը պարտաւոր:

Աստիցմէ զատ՝ նուիրական պարտք կը համարվի մեզ յայտնել մեր երախտագիտական զգացմունքը, և ուսումնական և Խոստովեան աղետակալ Տիկնայց, որոց ազդեցութեան արդիւնքներն են զորս կրկնելով հոս կընուիրենք նաև մեր խորին և անկեղծ շնորհակալութիւնը պատկառելի Ուսումնական խորհրդոյ մեծազուն անդամներուն, որոնք իրենց ազդեցութեան պարտքը անթերի կըրտադրեն յոսման զարթոյնը զարթելու զմեզ յոսումնաւորութիւն խորհրդակցելով: Մէծ է անոնց հոգատուութիւնը մեր վրայ, և անխնայ ջանքեր կաշխատին վարժարանի բարեկարգութեան և յառաջադիմութեան, և երբեմն երբեմն բարոյական խրատներ և յորդորներ մեզ ուղղելու ջանքներն: Չենք կրնար նաև լուրջ համար անցնել առանց մեր խորին շնորհակալութեան յայտնելու այն ազգասէր Տեառն, որոնք ազգային պաշտօններ կը վարեն անխնայ ջանքեր և մեծ ճգամք: անոնք ազգայնաց վիճակը բարելաւելու ջանադիր եղած ատենին՝ զմեզ զամենքս յերախտագիտութիւն կը շարժեն: Ուրեմն կը բարեմաղութենք մեր ալ անոնց համար երկարատե կեանք և երջանիկ օրեր:

Մարիամ Մկրտչեան:

Կալիվաթայէն ներկայ տարւոյն Մայիսի 8 ամսաթուով հետեւեալը կը գրեն մեզ:

«Պօղոս վարդապետն (Արշակունեան), որում յանձնարարական թուղթ էիք տուեալ (1) հոկտեմբեր ամսոյ, եհաս աստ ի փետրուարի, և ել իսկոյն ի Բարմատան, այնինչ ասացեալէր յարգութեանդ թէ ունի երթալ ի Քաբուլ ի խնդիր ցրուեալ եղբարցս որ անդ: Աստ ևս ոմանց այսպէս և այլոց այնպէս բանս կարկատեաց, այնինչ գիտուն իւր բողոքովին էր փող հաւաքել, ոչ շատացեալ մեծ գումարին զոր ի նորոյ տարու աստէն: Ո՛հ, մինչև ցերեք այսպիսի անվայել ընթացք եկեղեցականաց մերոց զայլմանկեցուցին զտառապեալ ազգ մեր:

«Ազգային տարաձայնութիւն տեղւոյս, ուրախ եմ ասել, փութով խաղաղեցաւ խոհական բարեմտութեամբ ժողովրդականաց: Ուրախ լինէի եթէ և յարգելի եղբարք մեր այդոցիկ կողմանց միտ գնէին ազգաշինութեան»:

(1) Զյանձնարարական նամակ մեր տուաք նմա ըստ ինզորոյ յանձնարարական բողոքն՝ գոր յիշեալ վարպետն բերեալ էր մեզ ի Կոստանդնուպոլսոյ:

Ս. Խ.

Կեղեցական դրամոյ ի գործ ածել յօդուս խալիպեան ուսումնարանին, զոր և ոչ թէ շաշլարար վատնէ, ըստ Մէլ-ին, այլ զհաշիւս մանրամասն դրէ նա և յայտնէ Տէրութեան և Սինոդի որոյն լիջմանին: Ուստի և Մէլ-ին ասած «Զաշաւաթն» մի վաղածանօթ ստուծիւն է համարելի:

Եւ Սուտ է թէ Առաջնորդն դատարարած և նշուած լինի զՄէլ-ն, որպէս փափաքի նա հաւատացանել չարութեամբ (91): Եթէ Մէլ-ն կայսերական կառավարութեան դէմ չգրէ՝ Առաջնորդն թողու անյիշաւար սրտիւ իւր վիճակի մէջ, ինչպէս ի վկայից գիտեմք հաւատեալ, որ Մէլ-ին այս տարուան թերթին նա իւր ձեռքով տուեալ տա պատուաւոր անձն մի՝ որ բաժանորդ է Մէլ-ին ի թէոքոսիս:

Այս ամէն բաներն վկայելէն յետոյ ընդգէմ Մէլ-ն ծածկասէր զգարաւոր, խորհորդ ևս տամք նմա, որ առաւել շրջապէս լինի յամբաստանութիւնս և ի չարախօսութիւնս իւր: Ստորոգէ որ սղատ է Մէլ-ն տպագրելու բարին և զգար, այլեթէ ըզգուշաւորութեամբ ի գործ ածէ զիւր ազատութիւնն՝ շատ բարեք կարողէն անտի ծնանել յօգուտ ազգին: Բայց ազգի օգուտ չէ՛ զգարտել և նախատել զուր տարապարտոյց զայն պատկառելի վարդապետն որ զսիրտ և զգիրն մաշէ ազգին սիրոյն համար, և ուրոյ բողոք ջանքն և հեռատեւ մտածութիւնն ուղ-

Հալէպէն հետեւալ նամակը յուղարկած է մեզ ի հրատարակութիւն:

Յարգոյ խմբագիր:

Արարկերու առաջին գերդաստաններէն աղետակարմ Սարգիս աղայն Քիւսէկեան արդէն ծանօթ է ձեզ թէ՛ իւր ազգօգուտ դրոճելովը և թէ՛ անձնական տեսութեամբ և սերտ բարեկամութեամբ, զոր ունիք անոր հետ:

Այս մեծարգոյ անձը իստական ժամանակ է որ Հալէպը թողելով Անտիոք կըրնակի իւր ազնիւ ընտանեօրը ուր ոչ միայն մեր ազգայնոց սիրտը գրաւեց իւր քաղցր բնաւորութեամբը, այլև օտարաց և զլիաւոր պաշտօնաւորաց մասնաւոր սէրը և համակրութիւնը ձեռք բերաւ:

Հալէպու Անգլիոյ ընդհանուր հիւպատոս մեծապատիւ միտք իսկին տեսնելով յիշեալ Սարգիս աղային այս ազնիւ յատկութիւնները, փութացաւ զրելու և առաջարկելու անոր, որ հաճի ընդունել Մեծին Բրիտանիոյ հիւպատոսի պաշտօնը Անտիոքի և Սուէտի մէջ: Մեծարգոյ Քիւսէկեան Սարգիս աղան սիրով ընդունեցաւ այս պատուաւոր պաշտօնը, և արդէն ի պաշտօնէն Անգլիոյ հիւպատոս ծանօտեցաւ:

Յիշողի է որ, մօտեւ անգլիական ընկերութիւն մի կազմուեցաւ ի Ռոտտոն, որ երկաթուղի մի պիտի շինէ Հալէպէն սիսեալ և յիշեալ տեղումներն անցնելով մինչև մօտաւոր ծովէկերը. ուստի Սարգիս աղային այս պաշտօնը և երկաթուղւոյն շինութիւնը միեւնոյն ժամանակի մէջ պատահելով, տարակոյս չունիմք թէ այս զուգընթաց յոյժ լինելու շատ օգտակար պիտի ըլլայ Անտիոքի և Սուէտի մէջ և անոնց շրջակայները բնակող բազմաթիւ խեղճ և տառապեալ Հայոց նիւթական պիտոյցը:

Վասնորոյ բողոքով սրտիւ կը շնորհակարտիք յիշեալ մեր ազնիւ բարեկամին իւր այս ազգօգուտ պաշտօնը՝ հանդերձ սարսուռապատշաճ բարեմաղթութեամբ, և կը վերջնայնեմ նամակիս, ուրիշ անգամի թող տալով խօսիլ ի վերոյ Հայոց զարթոյնի, որ իւր արդեամբը հաստատուած է Անտիոքի մէջ:

Հալէպ, 11 Յունիս 1862:

Յ. Ս. Ք.

Համբաւաբերին Մայիսի 10 և 20 թիւերը հետեւեալ ազգային լուրերը կը պարունակեն:

«Վեհափայլ սրբազնաւատար կաթողիկոսն՝ Վաղարշապատայ գիւղական ուսումնարանի մշակութեան եկամուտը հարստացնելու համար, բարեհաճեցաւ նուիրել համաձայնութեամբ և հաստատութեամբ սրբազան Սինոդի՝ Վանթարի մաքսը, Վինեվաճառութեան կրպակը և Վալադանդի մաքսը. որոց տարեկան արգելքն ընդ ամեն լինումէ 600 արծաթ թուրքի. զոր ստանում էր մինչև ցայժմ Վանթարի Սինոդի նուիրաբերութիւնը վեհափայլ կաթողիկոսի ի գիմաց Վանթարի մեծ ձեռնտուութիւն ունի լինել ուսումնարանին, նորա բարեխաղութեան և յառաջադիմութեան մասին: Վեհափայլ կաթողիկոսն ազգային ուսումնարանները այսպէս պաշտպանելուն համար՝ ի ղեալ է ազգի ապագայ երջանկութեան վերայ: Բայց Մէլ-ն ոչ միայն զգարտեալ է զայնպիսի ազգասէր Առաջնորդ մի, այլև գոհակարար պակասեալ է յամենայն օրինաց քաղաքավարութեան, երբ զամբողջ 95-96 երեսն լցուցեալ է այնպիսի սոսկալի անախարհ ընդդէմ Առաջնորդին, որոց հաւատարմ համարձակեալ է առաւել միամիտ լինել քան զՄէլ-ն:

Եւ այս ահա առ սէր ճշմարտութեան հարկաւոր համարեցայ հաղորդել Ձեզ, ազգասէր խմբագիր, և յուսամ որ իմ սիրելի հայրենակիցը համոզուին թէ իմ փոյթ և ջանք այն էր՝ որ իբրեւ ակնատես վկայ և անաչառ քննիչ հրատարակեմ զճշմարտութիւն, որպէս զի զգարտութեանց հաւատք չընծայեն, և իմազնիւ ազգայինք չլինին հաղորդ ապերախութեան Մէլ-ին և նորա համախոհից՝ որ առանց երկնչելոյ յարգաբաղատ լըրկնից զգարտեն զճշմարիտ պաշտօնեայ Աստուծոյ ամենակալի:

Մէլ-ն և նորա թղթակցին միւս անիրաւ և անպատեհ ամբաստանութեանցն հարկ չեմ համարեալ մի առ մի տալ արատախանի, բայց կարողեմ և պարտատեմ ցոյց տալ երբ և հարկն պահանջէ՝ նոցա ամենուն ևս ստուծիւն կամ ծուղութիւնն անձխտելի ապացոյցներով:

ՅՈՎՀԱՆՆԵՍ Ե. ՄԻՐԱՔԵԱՆՅ

Կայսերական փոփոքոր Լուսաւորեցական Հայոց Սինոդի սրբոյ Եղիմիմի, եւ խորհրդակալ պետութեան:

Հարկէ ամենայն Ուսումնական Հայոց, Վաղարշապատայ բնակեաց հետ ի միասին, պարտական են գոհացող սրտիւ շնորհակալ լինել միշտ նորա հայրական խնամոցը:

«Յիշեալ ուսումնարանին մէջ եղան քանի մի փոփոխութիւնք: Հայկաբանութեան աւագ վարժապետ՝ գիտնական Վրդգոր վարդապետն, հիւանդութեան պատճառաւ արձակուեցաւ պաշտօնից, նա երկու տարի ձրի վարժապետութիւն տրու և շատ ժիր էր իւր պաշտօնի մէջ: Նորա ժամանակ նշակերտը մեծ յառաջադիմութիւն ցոյց տուին մայրենի լեզուին մէջ: Նորա տեղ՝ Նորին Վեհափայլութիւնն կարգեց վարժապետ քերականութեան և ճարտասանութեան զնորհազարդ Վանիէլ վարդապետը, որ Վանթարի երեւելի գիտնական վարդապետաց մինն է: Լըրջանիշխատակ Ներսէս կաթողիկոսն միշտ ասում էր նորա համար թէ, «Վա ակնաւոր անձն կըլինի ժամանակին»: Եւ արդարեւ նորա հայրենասիրական եռանդն արդէն ցոյց է տալիս թէ յոյժ պիտանի և արդիւնակատար մշակ պիտի լինի նա մեր եկեղեցւոյ և ազգին»:

«Վրդի Յիշեալ Վաղարշայի ճեմարանին կառավարութեան տնտեսական մասին խորհրդական և Սոքրուայու Հայոց եկեղեցեաց երէց փոխ փորուտիկ Յարութիւն Սահարեան Նիւուլեանցի իւր գերազանց և ջերմեռանդն ծառայութե համար բարձրագոյնս վարձատրուեցաւ սրբոյն Վանիսլաւայ երկրորդ աստիճանի շքանշանաւ»:

Լըրջանից կը գրեն Մայիս 21 ամսաթուով:

«Եւ յօր յառաջ տուա վեհափայլ սրբազան կաթողիկոսն ել ի ճանապարհ դնալ ի Տիֆլիս ընդ նմա ուղիկից են Սահար և Ներսէս եպիսկոպոսք: Առաջինն նշանակեալ է Առաջնորդ Վրդապետին և չե ևս է առաջարկեալ կայսերական երկրորդն՝ ձեռնապահ է ինքեան կաթողիկոսին»:

Փարիզի Օբիէն Նախնաւորագրին մայիսի 25 թիւը հետեւեալ ազգային լուրը կը հրատարակէ:

Վաղարշայեան տէր Վերոստոս, որ գիտնոց մէջ ծանուցեալ է իւր արեւելեան գրագիտական և լեզուագիտական բազմաթիւ աշխատասիրութեամբ, սրբոյն Վանիսլաւայ կարգին աստիճանի շքանշանը ընկալաւ օգոստոսի ամսին Ուսոց կայսերէն:

«Վրդէն ուրախ սրտիւ լսած էինք թէ նոյն արժանապատիւ վարդապետը 4-5 ամիս յառաջ ազատանդեայ մեծագին մատանի մի ընդունած էր ի Նորին կայսերական Վեհափառութեան»:

Սոսկուայի Համբաւաբեր Ուսուցիչ պատուական լրագրերը պիտի շարունակուի և յառաջակայ Ռ-ՅԺԲ (1312) տարին ազգային թուականի մերոյ, սկսեալ յօգոստոսէ 1862 ամին, առանձին (այսինքն առանց Ղաթաղի որ դադարեցաւ), հրատարակուելով ոչ երկու անգամ ամիսը ինչպէս էր յառաջին տարին, այլ երեք անգամ՝ այն է իւրաքանչիւր ամսոյ 1ին, 10ին և 20ին, միևնոյն ձեով, միևնոյն բովանդակութեամբ և ուղղութիւնը որ կը հրատարակուի ներկայ Ռ-ՅԺԲ ամին Հայոց թուականիս:

Տարեկան գինն է հանդերձ ծախիւքն ճանաչող հի մինչև Իզմիր, 4 բարպոլանց կամ 16 ֆրանք, կանխիկ վճարելի:

Թուրքաստանի և Նիգիստանի մէջ ուլ որ կը ցանկայ բաժանորդ գրուել յիշեալ լրագրութեան, կրնայ իւր խնդիրը ծանուցանել Առաջնորդ խմբագրին, որ յանձնառու եղած է Համբաւաբեր գործակալութեանը Իզմիրի մէջ, և որուն ձեռքով բաժանորդ գրուողները ապահովութեամբ և կանոնաւոր կերպիւ պիտի ընդունին յիշեալ լրագրութեան թերթերը:

Յաւալի սրտիւ կը ձանուցանեմք թէ Տիֆլիս ու Սիւնի Հայաստանի լրագրերը և Կոստան Հայոց աշխարհի բանասիրական տետրակը՝ 5-6 ամիսէ ի վեր չեն հասնիր Իզմիր:

Թեպէտեւ չեմք կրնար ձգել գիտնալ անոնց այլալի յապաղման պատճառը, բայց կարծեմք թէ գործակալաց անհոգութիւնը պիտի ըլլայ:

